ՏԵՂԵԿԱՆՔ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 14. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մարտական կիրառումը քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին և փրկարարական աշխատանքներին մասնակցությունը

(վերնագիրը փոփ. 26.05.05 ՀՕ-124-Ն, լրաց. 07.04.16 ՀՕ-39-Ն)

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մարտական կիրառման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, փրկարարական ծառայության կանոնագրքերով և կանոնադրություններով:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների պահակային ծառայությունը կազմակերպվում և իրականացվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պահակային ծառայությունը սահմանող իրավական ակտերին համապատասխան:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում պահակային ծառայությունը կարող է կազմակերպվել նաև ռազմականացված կամ ոչ ռազմականացված պահակային ստորաբաժանումների՝ փրկարարական ծառայության մեջ չգտնվող անձանց միջոցով: Ռազմականացված պահակային ստորաբաժանումներում պահպանությունն իրականացվում է ~~ծառայողական~~ զենքով՝ քաղաքացիական պաշտպանության բնագավառի լիազորված մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

(14-րդ հոդվածը փոփ., խմբ. 26.05.05 ՀՕ-124-Ն, լրաց. 07.04.16 ՀՕ-39-Ն)

(հոդվածը 16.12.22 ՀՕ-482-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի Փրկարար ծառայության կանոնադրությունն ուժի մեջ մտնելու օրվանից)

Հոդված 15. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների անձնակազմը

(վերնագիրը փոփ. 26.05.05 ՀՕ-124-Ն)

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների անձնակազմը բաղկացած է փրկարարական ծառայողներից և քաղաքացիական անձնակազմից:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների փրկարարական ծառայողներին շնորհվում են փրկարարական կոչումներ՝ «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների փրկարարական ծառայողները կրում են փրկարարական ծառայության համազգեստ, փրկարարական

կոչումներ և քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների տարբերանշաններ, ինչպես նաև միջազգային տարբերանշաններ և կրում են ~~մարտական ու ծառայողական~~ զենք:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում փրկարարական ծառայությունն ու քաղաքացիական անձնակազմի գործունեությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների փրկարարական և քաղաքացիական ծառայողներին տրվում է անձն ու կարգավիճակը հաստատող վկայական:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների տարբերանշանների, ծառայողների անձն ու կարգավիճակը հաստատող վկայականների ձևերը հաստատում է լիազորված մարմնի ղեկավարը:

(15-րդ հոդվածը փոփ. 26.05.05 ՀՕ-124-Ն, 07.04.16 ՀՕ-39-Ն)

(հոդվածը 16.12.22 ՀՕ-482-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի Փրկարար ծառայության կանոնադրությունն ուժի մեջ մտնելու օրվանից)